ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՅՈՒՐԻ ԱՆԴՐՈՊՈՎԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ
(12 փետրվար 1984 թ.)

Սիրելի հավատացյալ ժողովուրդ,

Այսօր ես տխուր սրտով բարձրացա Ս. Սեղան: Տխուր սրտով, որովհետև մեր ամբողջ երկիրը, Սովետական Միության բոլոր հանրապետությունները և համայն ժողովուրդը սգո մեջ են գտնվում: Սգո մեջ, որովհետև իր աչքերը փակեց Սովետական Հանրապետությունների Միության նախագահը, սովետական բազմազգ հայրենիքի ամենաբարձր պաշտոնակատարը և պատասխանատու, ղեկավարը: Բնական է, որ մենք բոլորս տխուր սրտերով այսօր ոգեկոչենք նրա հիշատակը և աղոթենք նրա հոգու խաղաղության համար:

Սիրելի ժողովուրդ, մեր փոքրիկ երկիրը՝ Սովետական Հայաստանը, ավելի քան երեք միլիոն բնակչությամբ, անբաժան մասն է կազմում Սովետական Միության հսկայածավալ երկրի, բազմազգ այս պետության: Մեր մայր երկիրն էլ այդ հանրապետություններից մեկն է, որով մենք հոգով և սրտով, մեր բոլոր մտորումներով, մտահոգություններով, նաև մեր ազգային իրավունքների իրականացման հեռանկարով կապված ենք անշեջելի կերպով Սովետական Միության այս մեծ ընտանիքին, այն հաստատ գիտակցությամբ, որ մեր ժողովուրդը անցյալում բազում դարեր տարապած, շահագործված և նույնիսկ հետամնացված, իր վերջնական խաղաղ և ապահով կյանքը գտավ շնորհիվ ռուս ժողովրդի եղբայրական օժանդակության և շնորհիվ Սովետական Միության հզոր հովանավորության: Առանց դրան մեր ժողովուրդը ստույգ կերպով ենթակա կլիներ բնաջնջման և կործանման, այնպես, ինչպես այդպիսի ահավոր ճակատագիր ունեցավ Արևմտյան Հայաստանը առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, ինչպես բոլորդ քաջ գիտեք:

Հետևաբար, երախտապարտ սրտով, հայ ժողովուրդը հավատարիմ կմնա Սովետական Միության ժողովուրդների եղբայրության, միասնության և գործակցության ոգուն: Մեր ժողովրդի զարգացումը, նրա կյանքի ապահովությունը, ազգային մշակույթի զարգացումն ու շինարարական մեծ նվաճումները, որոնք տեղի են ունենում մեր երկրում այս վերջին վաթսուն և ավելի տարի-

ների ընթացքում, երաշխավորում են այդ իրողությամբ ու ճշմարտությամբ: Եվ դեռ ավելին, մեր ամբողջ ապագը ի Հայաստան և ի ամբողջ աշխարհի, իր ապագայի արդար երազանքների իրականացումը կապում է Սովետական Միության բախտի հետ, նրա ճակատագրի, նրա ապագա նորանոր հաղթանակների հետ:

Ահա այս պատմական հիմքի վրա, այս ճշմարտությունների լույսի ներքո, մենք պետք է անդրադառնանք մեր պետության մեծ ղեկավարների կյանքին, նրանց գործունեությանը, նրանց վաստակին: Եվ հետևաբար, երբ դժբախտ մի պատահարով այդ ղեկավարներից մեկը հեռանում է այս աշխարհից, մենք, իբրև հայ ժողովրդի զավակներ, վշտով ենք համակվում և երախտապարտ սրտով անմոռաց պահում նրանց բարի հիշատակը:

Սովետական Միության Հանրապետությունների նախագահը՝ հանգուցյալ Յուրի Անդրոպովը, ճիշտ է, կարճ ժամանակ հնարավորություն ունեցավ մնալու մեծ ղեկավարի պաշտոնի վրա, սակայն նրա ամբողջ կյանքը եղել է մի օրինակելի նվիրում սովետական ժողովուրդների կյանքի բարօրության ու ծաղկման: Դեռևս պատանի տարիքից նա նվիրվել է խանդավառ սրտով մեծ հեղափոխության համամարդկային գաղափարների կենսագործմանը, պատասխանատու պաշտոններ է վարել, հայրենական պատերազմի ծանր տարիներին խիզախությամբ ու հավատարմությամբ պայքարել ի խնդիր հայրենիքի փառավոր հաղթանակի, և ապա այլ պատասխանատու պաշտոններ վարել: Հանգուցյալը, ինչպես բոլորդ կարծում եմ վկայում եք, իր պարտքը անմնացորդ կերպով կատարեց՝ համեստությամբ, իմաստությամբ, ազնվությամբ, մտքի ու հոգու հավասարակշռությամբ, միշտ խաղաղ հոգով: Մեր օրերի փոթորկահույզ աշխարհի պայմաններում, նա, այո՛, անաղարտ պահպանեց իր հոգու խաղաղությունը, մտքի հստակատեսությունը և մարդասիրությունը: Հատկապես նա մնաց հաստատակամ շարունակողը սովետական ժողովուրդների խաղաղության արդար պայքարի: Ինչպես գիտեք, վերջին մեկ տարվա ընթացքում նա բազում անգամներ հանդես եկավ կոչերով և կենդանի խոսքով՝ հոգուտ պահպանման աշխարհի պետությունների խաղաղ գոյակցության, հոգուտ ժողովուրդների բարեկամության և հոգուտ զինաթափման: Այսպես է, որ նա սիրելի դարձավ և հարգանքի արժանի ոչ միայն Սովետական Միության մեջ, այլ նաև համայն աշխարհում: Հենց այս օրերին, երբ ինքը չկա, արտաքահմանյան պետական մեծ գործիչներ, Արևելյան ու Արևմտյան երկրների պատասխանատու ղեկավարներ, հիշում են նրան իբրև պայծառ անձնավորություն, որ առաջնորդվում էր մարդասիրական և խաղաղասիրական իդեալներով:

Սիրելի ժողովուրդ, մենք և դուք, իբրև Եկեղեցի և իբրև հավատացյալներ, կարծում եմ չենք կարող մեկուսանալ, բաժանվել մեր ամբողջ ժողովրդի զգացմունքներից: Հետևաբար այսօր մենք էլ վշտահար սրտերով ոգեկոչում ենք լուսավոր կյանքը և մեծ վաստակը նորոգ հանգուցյալ Յուրի Անդրոպովի՝ սովետական բազմազգ հանրապետությանց նախագահի, և աղոթում ենք, որ նրա հոգին հավերժական խաղաղության աշխարհում գտնի իր հանգիստը, իսկ նրա հիշատակը մնա անթառամ բոլոր մարդկանց և ժողովուրդների կյանքում:

Թող Տերը միշտ խաղաղ ու անսասան պահի մեր մայր հայրենիքը՝ ամենայն հայոց Մայր Հայաստանը և Սովետական Միության մեր եղբայր ժողովուրդներին՝ հարատև վերելքի ու ծաղկման ճանապարհին, այժմ և հավիտյան. ամեն: